



## Ե Թ Ո Վ Պ Ա Հ Ա Յ Ա Բ Ը

**Եթովպահայերի նորընտիր և երիտասարդ հովիվ Հոգեշնորհ Տ. Զավեն արելա Արզումանյանի՝ Վեհափառ Հայրապետին ուղղած 10 դեկտեմբեր թվակիր նամակի զեկուցագրից քաղաքաբար հրատարակում ենք որոշ տեղեկություններ՝ եթովպահայ թեմի ազգային-եկեղեցական կյանքի և կազմակերպությունների մասին:**

Հոգեշնորհ Տ. Զավեն արելան Կիլիկյան միաբանության խոստումնալից անդամներից մեկն է, որը եթովպահայ գաղութային ժողովի կողմից հրավիրվել է եթովպահայում հայ գաղութի Հոգեշնորհ Հովկության պաշտոնին, Եփիպատուի հայոց բարեխնամ առաջնորդ գերազնորհ Տ. Մամբրի արքեպիսկոպոսի համաձայնությամբ։

Եթովպահայերի Հովկուր Հովիվը 1957 թվականի հոկտեմբերի 21-ին, Բեյրութից, Երուսաղեմ—Կահիրե—Խարբում ճանապարհով ժամանում է Ադրիս-Աբերա և պատշաճ հարգանքով ընդունվում գաղութի կողմից։

Հովկուր Հովիվ առաջին պարտականությունն է լինում ծանոթանալ թեմի ազգային-եկեղեցական կյանքին և «պատրաստի կարելի մանրամասնություններով տեղեկադիր մր., որ ներկայացներ գաղութի իր ամրողական պատկերին մեջ և հանձնել Վեհափառի բարձր նկատառման ի գիտություն»։

Ամեն կիրակի պատշաճ հանդիսությամբ Ադրիս-Աբերայի հայոց Ս. Գևորգ եկեղեցում մատուցվում է սուրբ պատարագ, որի ընթացքում Վեհափառ Հայրապետի անունից հետո Հիշատակվում է նաև եթովպահայի «պատվական քրիստոնասիր կայսեր՝ Վեհափառ Հայե Մելասեի անուն»։

Եթովպահայ գաղութի հավատացյալների սրտում միշտ վառ է «սերը և հավատարմությունը հանդեպ Ս. Եջմիածնի և Զերոյ Վեհափառաւթյան», — գրում է Հովկուր Հովիվը։

Հոգեշնորհ Տ. Զավեն արելան պաշտոնական այցելություն է տվել Հարեց եկեղեցու պետ Արտ Վասիլիիս արքեպիսկոպոսին,

նրան հաղորդելու Վեհափառ Հայրապետի ողջույններու Հովկուր Հովիվը ընդունվել է պատշաճ մեծարաններով հարեշական արքեպիկոպոսի կողմից, որ ներկայության շրջանիսկոպոսներու, որոնք հետաքրքրվել են Ս. Եջմիածնով և Վեհափառ Հայրապետի գործունեությամբ։ Հովկուր Հովիվը հաջորդ շաբաթներում կատարել է մի շարք Հովվական այցելություններ, ժամանական այցելել է Դիրե-Դավայի հայության։

Եթովպահայ գաղութի ինքնիր մեջ հաշվում է 1 000 հոգի, մեծամասնությունը հաստատված մայրաքաղաքում, 53 հոգի Դիրե-Դավայում (Հարար նահանգ), 34 հոգի Ջիրուտիում (Ֆրանսիայի նահանգ), 22 հոգի Ասմարայում (Էրիթրիա)։

Եթովպահայ գաղութի ազգային-եկեղեցական կյանքը վարում է 7 հոգուց բաղկացած Երովպահայ գաղութային ժողովը, որն ընտրվում է 4 տարին մի անգամ գաղութի կողմից։ Ժողովը հաստատվում է եթովպահայի ներքին գործերի մինիստրությունից և Եփիպատուի հայոց պատվային առաջնորդարանի կողմից։ Եթովպահայ գաղութային ժողովից որպես նախագահն է օրվա Հովկուր Հովիվը։

Եթովպահայ գաղութային ժողովից է բախում Ռւսական խորհուրդը, որն զբաղվում է զպրոցական հարցերով, և Եկեղեցական հոգաբարձությունը։ Պետության առաջ գաղութային ժողովն է պատասխանատու Եթովպահայ պատվային-եկեղեցական գործունեության համար։

Մինչև 1944 թվականը Ադրիս-Աբերայում շի եղել Հայկական եկեղեցի, թեև շատ կանուխից գաղութն ունեցել է իր փոքրիկ մատուցը՝ աղոթքի և պաշտամունքի համար։

Ադրիս-Աբերայի հայոց Ս. Գևորգ եկեղեցին կառուցվել է 1934 թվականին, ազգային բարեբար Միհրան Մուրակյանի ժամադրությանից հանդուցյալ հոր՝ Գևորգ Մուրակյանի։ Այս է եկեղեցու հիշատակարանը։

«Եկեղեցին Ս. Գևորգ շինեցաւ արդիամբ և ծախիւմ Միհրանայ Մուրատեան յանուն և

յանման լիշտառակ հոգելոյս հօր իւրա Գէորգայ Սուրատեան յամի Տեառն 1934 և ի բարին նայոց մզդ, ի հայրապետութեան Տեառն նուրեայ Վեհափառ Կարողիկոսի, ի պատրիարքութեան Սրբոյ Սաղիմայ Տեառն Թորգոմայ սրբազն արքեպիսկոպոսի, ի պատրիարքութեան կ. Պոլսոյ Տեառն Մեսոռպայ սրբազն արքեպիսկոպոսի:

Եկեղեցու հիմնարկեքը կատարվել է 1928 թվականին Հոգելույս Տ. Գևորգ արքապիսկոպոս Արաւանյանի կողմից, իսկ օծումը՝ 1944 թականին եպիստահայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրի արքապիսկոպոս Սիրունյանի կողմից:

Այժմ եկեղեցու ներքին մասը՝ որմանկարներով, սյունազարդումներով, յուղաներկուն ներով և կահճագորումով, նախանձելի վիճակ ունի այն օրից ի վեր, երբ գաղութի նորակազմ Հայ տիկնանց եկեղեցասեր միությունը, ավելի քան 2 000 անդիմական ուսկի գոլացնելով, հիմնական նորոգության հնարկեց տաճարը:

Գաղութի մեջ, մնայում կամ այցելու հանգամանքով, գտնված են Տ. Գևորգ արքապիսկոպոս Արաւանյան, Տ. Մամբրի արքապիսկոպոս Սիրունյան, Տ. Հովսեփ եպիսկոպոս Կարապետյան, Տ. Եղիշե եպիսկոպոս Տերտերյան, Տ. Հովհաննես ավագ քահանա Կևերյան, Տ. Մկրտիչ քահանա Զլլատյան, Տ. Վարդան քահանա Տեր Աստուրյան: Եկեղեցին ունի իր Հոգաբարձությունը՝ նշանակված Գաղութային ժողովի կողմից:

Աղքիս-Արեգայի հայոց դպրոցը իր հերթին կառուցվել է Մատթիկ Գևորգովի նվիրատվությամբ, 1932 թվականին: Դպրոցը երկհարկանի մի գեղեցիկ շենք է լուսավոր պատուհաններով, ընդարձակ բակով և այլ անհրաժեշտ հարմարություններով: Այժմ դպրոցն ունի 180 երկսեռ աշակերտ, որոնցից 95 հոգի նախակրթարանի բաժնեամ, 85 հոգի մանկապարտեզում: Դպրոցի ուսուցչական կազմը բաղկացած է 18 հոգուց: Դպրոցի տարեկան բյուջեն կազմում է 45 000

և թովապական դրամը, որում կեսը՝ միայն կարելի կը լսա ապահովել աշակերտներին: Գաղութի ժողովում գործում են Ռուսական կանոնադրության մասին կազմականին, 1955 թվականին, ունի 120 անդամ, մեծապես նվիրված եկեղեցու պայմանագրական աշխատանքներին: Եկեղեցասեր տիկնանց միությունը իր հանգամանքած 2 000 անդիմական ուսկի գումարով վերջերս հատկացրել է Ս. Գևորգ եկեղեցու վերանորոգության և եկեղեցին ապահովել և եկեղեցական զգաստներով, շատիկներով, սպասներով, կահճագորվել է նաև ազգային առաջնորդականը:

Աղքիս-Արեգայում կա նաև Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության մասնաճյուղ 100 աղքամներով:

Գաղութում գործում է նաև Հայ տիկնանց բարեսիրաց միությունը 1956 թվականից: Այս միության գլխավոր նպատակն է «օգնել պաշտպանին ու դժբախտին», մասնավորապես Ազգակեր (Լիբանան) Ազգային բուժարարանին, ընդհանրապես աղքամ ուսանողներին և քաղաքի աղքամ հիվանդանոցներին:

1939 թվականից ի վեր եկեղեցու պայծառության համար գործում է Մուրատյաներգությունը, ղեկավարությամբ պր. Ներսիս Նալբանդյանի: Սուրբ պատարագին երգուում է Եկմալյան պատարագը: Բացի այդ, երգչախոմբը վերջերս կազմակերպել է «Համերգ» ներ, երգահանդեսներ, օրինակ՝ «Սուս և Վարդիթեր» երգախառն դրաման և «Արշին մատանա» օբերետը: Երգչախոմբը վերջերս նշանական դեմուստի վարդապետի հիշատակը երգահանդեսով:

Գաղութին ունի նաև իր մարմնամարզական «Արարատ» միությունը, սպորտի իր սեփական երկհարկանի շենքը, մարզադաշտը, 120 անդամներով:

Այս բոտի մասին հայորդերով Վեհափառ Հայրապետին, Հոգիոր Հովհիլը խնդրում է Վեհափառ Հայրապետի օրհնությունները «հեթովահարաց և մեսի, աստվածահան» մեր դորժերուն հաջողության ի ինդիրու:

